Digitally signed by HAYRAPETYAN HRACHUHI 5607810178
Date: 2023.04.12 11:55:46 MSK

Ես և շրջակա աշխարհը
2-րդ դասարան
Շաբաթական 1ժամ
Տարեկան 32 ժամ

Դասարան՝ 2-րդ
Դասվար՝ Հ. Պարսամյան

Ժամ	Ամսաթիվ	Թեմա	Տնային աշխատանք
		Թեմա՝**Ով եմ ես:** (6 ժամ)	
Նպատակը		• Զնավորել ինքնաճանաչման, ինքնարժևորման, ինքնաարտահայտվելու հմտություններ: • Զնավորել սեփական անհատականությունը բացահայտելու,և յորաքանչյուրի առանձնահատկությունը հարգելու կարողություն :	•
Վերջնարդյունքները		• Նկարագրել իրենց զբաղմունքը, նախասիրությունները, հետաքրքրությունները: • Ճանաչել իր և ուրիշների հույզերը, կառավարել դրանք, ապրումակցել: • Ճանաչել սեփական կարողություններն ու հնարավորությունները:	•
1		Դաս 1. Արի ծանոթանանք	
2		Դաս 2. Ո՞վ եմ ես	
		Թեմա՝**Ես մենակ չեմ:**	
Նպատակը		• Զնավորել տուն, ընտանիք, տոհմ, գերդաստան գաղափարները: • Զնավորել ընտանեկան տոների, հանգստի, ժամանցի կազմակերպման, ինչպես նաև՝ ազգականների հետ արդյունավետ շփման և հոգատար վերաբերմունք դրսևորելու հմտություններ: • Զնավորել իսկական ընկերոջ մասին պատկերացումներ, օգնել ձեռք բերել ընկերներ և պահպանել ընկերությունը: • Ընդլայնել գիտելիքները սեփական բնակավայրի, մարդկանց, զբաղմունքների,առանձնահատկություն	•

		ների, տեսարժան վայրերի,բուսական և կենդանական աշխարհի մասին՝ ձևավորելով հոգատար, խնայող և պատասխանատու վարքագիծ:	
Վերջնարդյունքները		• Բացատրել դերերն ընտանիքում, իրավունքներն ու պարտականությունները ընտանիքում: • Ցուցադրել սեփական դերի գիտակցումն ու համապատասխան գործողությունները: • Ցուցաբերել հոգատար վերաբերմունք մերձավորների նկատմամբ: • Նկարագրել ինչպես են տարբեր ընտանիքները կազմակերպում հանգիստը, ժամանցը, տոները: • Կարևորել հարգանքը, փոխօգնությունը, պատրաստակամ լինել և կիսել ունեցածը , երբ դրա անհրաժեշտությունը կա: • Նկարագրել և օրինակներ բերել,թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը: • Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի իրական ընկերը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը և, որ դրանք պայմանավորված չեն սեռով:	•
3		Դաս 3. Իմփոքր և մեծ ընտանիքը	
4		Դաս 4. Ընտանիքում ամեն մեկն իր գործն ունի	
5		Դաս 5. Ընտանիքը հանգստանում է	
6		Դաս 6. Ես և իմ դասընկերները	
		Թեմա՝**Ես և մարդիկ :Փոխհարաբերություններ**	
Նպատակը		• Ձևավորել դրական վերաբերմունք կանոնների և դրանց կարևորության հանդեպ, գիտակցել դրանց անհրաժեշտությունը իրենց և ուրիշների իրավունքները պաշտպանելու համար: • Ձևավորել բարեկիրթ շփման հմտություններ: • Ձևավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն էական է ընկերական հարաբերություններում:	•
Վերջնարդյունքները		• Պահել դասարանական կանոնները: • Մեկնաբանել արարքների դրական և	•

		բացասական հետևանքները: • Կիրառել քաղաքավարության կանոնները: • Խուսափել վեճերից, կռիվներից, փորձել խոսել, հաշտվել միմյանց հետ:	
7		Դաս 7. Վարքագիծը դպրոցում	
8		Դաս 8. Իմ փողոցը, իմ բակը, իմ տունը	
9		Դաս 9. Իմ համայնքը	
10		Դաս 10. Իմ քաղաքը, գյուղը:	
11		Դաս 11. Ես և իմ բնակավայրը	
12		Դաս 12. Ի՞նչ սովորեցի: Կրկնություն	
13		Թեմատիկ գրավոր աշխատանք 1	
14		Թեմա՝ **Տիեզերք :Մարմիններ**	
Նպատակը		Օգնել տարբերակել և նկարագրել շրջապատում եղած իրերը,մարմինները՝ բնութագրել դրանց քանակական և որակական հատկանիշները:	
Վերջնարդյունքները		• Տարբերակել բնական և արհեստական նյութերը՝: • Նկարագրել շուրջն եղած իրերը, անվանել ինչից են պատրաստված՝ փայտից, ապակուց, քարից, ավազից և այլն:	•
15		Դաս 13. Ի՞նչ է մեզ շրջապատում	
16		Դաս 14. Բնությունն աշնանը	
		Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք 1	
		Թեմա՝ **Ես և բնություն**	
Նպատակը		• Օգնել գիտակցել բնության մեջ տեղի ունեցող բնական և մարդու գործունեության հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև մարդու ներգործության բացասական հետևանքները: • Նպաստել պատասխանատու վարքագծի ձևավորմանը: • Դիտարկել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները,թվարկել տարվա եղանակները՝ ըստ հերթականության և դրանց ամիսները: • Նկարագրել տարվա տարբեր եղանակներին մարդկանց, բույսերի, կենդանիների կյանքում կատարվող փոփոխությունները:	•

Վերջնարդյունքները		• Համեմատել և տարբերակել շրջապատի օբյեկտները՝ մարդու և բնության կողմից ստեղծված: • Դիտարկել, նկարագրել բույսերի և կենդանիների փոխկապվածությունը, բերել սննդային շղթաների օրինակներ: • Դիտարկել բույսերի և կենդանիների բազմազանությունը: • Խմբավորել կենդանիներն ըստ վայրի և ընտանի տեսակների: • Խմբավորել բույսերն ըստ վայրի և սենյակային տեսակների: • Դիտարկել և նկարագրել բնության եղանակային փոփոխությունները, թվարկել տարվա եղանակները և ամիսներն ըստ հերթականության: • Բացատրել, թե ինչ դեր ունի մարդը բնության վատթարացման գործում, մեկնաբանել բնության պահպանության և խնայող վերաբերմունք անհրաժեշտությունը: • Ճանաչել փոփոխությունները բնության մեջ, հասկանալ՝ ինչում է կայանում բնության վտանգված լինելը, ճանաչել կենդանիների և բույսերի որոշ վերացած և վտանգված տեսակներ՝ նաև մեր բնաշխարհի (կարմիր գրքի մասին):	•
17		Դաս 15. Ինչպիսին են բույսերը	
18		Դաս 16. Ի՞նչ կենդանիներ գիտես	
19		Դաս 17. Անտեսանելի կապերըբնությանմեջ	
20		Դաս 18. Վայրի բույսեր	
21		Դաս 19. Մեր այգիները և բանջարանոցները	
22		Դաս 20. Սենյակային բույսեր	
23		Դաս 21. Վայրի կենդանիներ	
24		Դաս 22. Ընտանի կենդանիներ	
25		Դաս 23. Ե՛ղիր բնության բարեկամ	
26		Դաս24. Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ:Կարմիր գիրք	
	27	Դաս 25.Կրկնություն	
		Թեմա՝**Անվտանգություն: Ես ապահով եմ** (9 ժամ)	
Նպատակը		• Ձևավորել և զարգացնել առողջության պահպանմանը ուղղված կանոնների	•

		իմացությունը: • Ձևավորել առողջ և անվտանգ սնվելու սովորություններ: • Ձևավորել օգտակար և թարմ սննդամթերք գնելու կարողություն: • Ձևավորել անվտանգության պարզ կանոնների մասին իմացության և համապատասխան ցուցումներին հետևելու կարողություն: • Ձևավորել և զարգացնել առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության մասին գիտելիքներ:	
Վերջնարդյունքները		• Ներկայացնել առողջության պահպանման կանոնները: • Նկարագրել՝ ինչպիսին պետք է լինի առողջ և սննդարար ուտելիքի պարունակությունը, օրվա ռացիոնը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը: • Տարբերակել առողջ և վնասակար սնունդը: • Տարբերակել կենդանական և բուսական ծագման սննդատեսակները: • Գիտակցել սննդի կարևորությունը մարդու օրգանիզմի համար: • Կարևորել առողջ սննդի ընտրությունը գնումներ կատարելիս: • Ներկայացնել այն վարվեցողության կանոնները, որոնք անհրաժեշտ է պահպանել տանը հիվանդ լինելու դեպքում: • Ներկայացնել առօրյա կյանքում հանդիպող վտանգները և դրանցից խուսափելու անվտանգության կանոնները: • Կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում և հետևել համապատասխան ցուցումներին: • Կարողանալ օգտվել համապատասխան հեռախոսահամարներից արտակարգ իրավիճակների ժամանակ: • Ներկայացնել լուսացույցից օգտվելու և ճանապարհը ճիշտ հատելու կանոնները:	•

		• Բացատրել հանգիստը ճիշտ և օգտակար անցկացնելու ձևերը: • Բացատրել, որ առողջությունը կախված է նաև շրջակա միջավայրի մաքրությունից:	
28		Դաս 26. Եթե ուզում ես առողջ լինել	
		Դաս 27. Ինչո՞վ ենք սնվում	
29		Դաս 28. Ինչպես խուսափել հիվանդանալուց	
30		Դաս 29. Տանը նույնպես պետք է ուշադիր լինել	
31		Դաս30. Ես հետիոտն եմ	
32		Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք 2	

Դաս 1.Արի ծանոթանանք *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ավարտի'ր միտքը:
   Բա'րև, իմ անունը---------- է:
   Ես---------- տարեկան եմ:
   Ծնողներիս անուններն են՝----------:
2. Նշի'ր ճիշտ պատասխանը:Աչքերս
   - սև են,
   - շագանակագույն են,
   - կանաչ են,
   - կապույտ են:
3. Լրացրո'ւ աղյուսակը՝ գրելով առնվազն երկուական զբաղմունք և խաղ:

Իմ ամենասիրելի զբաղմունքն է	Իմ սիրած խաղն է

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ինքնության վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ իր և ուրիշների,
- իր արտաքին տվյալները,
- իր նախասիրությունները, հետաքրքրությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել իր և ուրիշների ինքնությունը,
- նշել մարմնի որոշ մասերի հիմնական հատկանիշները,
- նկարագրել զբաղմունքը, հետաքրքրությունները, նախասիրությունները:

Դաս 2.Ո՞վ եմ ես *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նայի'ր նկարին և գրի'ր, թե ինչով է սիրում զբաղվել Արամը: Նշի'ր հնարավոր ճիշտ պատասխանները.



   - գնդակ խաղալ,
   - գիրք կարդալ,
   - ծաղիկները ջրել:

2. Շարունակի'ր միտքը:Գրի'ր առնվազն մեկ տարբերություն:

   Մարդիկ կարող են միմյանցից տարբերվել իրենց արտաքինով, կատարած գործերով,----------:

3. Ավարտի'ր նախադասությունները:

   Ամենից շատ սիրում եմ----------:

   Ես տխրում եմ, երբ----------:

   Ես ուրախանում եմ, երբ----------:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- սիրելի զբաղմունքները, ներառյալ՝ իր և ուրիշների,
- մարդկանց տարբեր լինելու մասին,
- իր հուզական աշխարհի առանձնահատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել նկարի բովանդակությունը,
- նշել մարդկանց միջև տարբերությունները բնորոշող հատկանիշները,
- ներկայացնել այն ամենը,ինչ սիրում է, ինչը ուրախացնում և տխրեցնում է:

Դաս 3.Իմ փոքր և մեծ ընտանիքը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ո՞ւմ հետ ես ապրում: Թվարկի՛ր ընտանիքիդ անդամներին:

---

2. Նշի՛ր ճիշտ պատասխանը:

   Բոլոր ազգականներին կարող ենք միավորել մի ծառի մեջ, որը մի մեծ ծառի կնմանվի : Այդ ծառը կոչվում է.

   - գերդաստան,
   - տոհմածառ,
   - ընտանիք:

3. Սլաքներով միացրո՛ւ և ստացի՛ր ճիշտ պատասխանները:

Երբ մեծերը խոսում են,	խոսքը՝ մեծին:
Ջուրը՝ փոքրին,	մի՛ ընդհատիր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- իր ընտանիքի անդամներին,
- տոհմածառ հասկացությունը,
- մեծահասակների հանդեպ հարգանքի կարևորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել իր ընտանիքի անդամներին,
- մեկնաբանել տոհմածառ և գերդաստան հասկացությունների տարբերությունը ,
- ներկայացնել վարվեցողության կանոնները:

Դաս 4.Ընտանիքում ամեն մեկն իր գործն ունի *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր, թե ընտանիքիդ անդամներից՝ ով ո՞ր գործն է կատարում:
   լվացք անել----------
   համակարգչով խաղալ----------
   կերակուր պատրաստել----------
   ծանր իրեր տեղափոխել----------
   նկարել----------
2. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:
   Ընտանիքում կարևոր է.
   - սերը,
   - փոխադարձ օգնությունը,
   - հաճախ վիճելը:
3. Ինչպե՞ս ես օգնում մայրիկիդ: Գրի՛ր 1-2 նախադասությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- իր և ընտանիքի անդամների դերերը, պարտականությունները,
- ընտանիքում փոխադարձ օգնության, հոգատարության, սիրո առկայության կարևորությունը,
- մեծահասակների հանդեպ հարգանքի կարևորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- որոշել և գրել իր և ընտանիքի անդամների դերերն ու պարտականությունները,
- նշել ընտանիքի անդամների փոխհարաբերությունների առանձնահատկությունները,
- օրինակներով ներկայացնել ընտանիքի անդամին օգնելու իր պատկերացումները:

Դաս 5. Ընտանիքը հանգստանում է *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ինչպե՞ս է ընտանիքդ հանգստանում ազատ ժամանակ: Գրի՛ր առնվազն երկու տարբերակ:

   ---

2. Դիտի՛ր նկարները և յուրաքանչյուրի տակ նշի՛ր, թե ինչ տոն է պատկերված:

---

3. Սլաքով միացրո՛ւ ճիշտ պատասխանները:

Սուրբ Զատիկ	տոնածառ
Նոր տարի	տորթ
Ծննդյան օր	ներկած ձու

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- հանգստի կազմակերպման ձևերը,
- տոների անվանումները,
- տոների առանձնահատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- նկարագրել իր և ընտանիքի հանգիստը, ժամանցը,
- տարբերակել և թվարկել տոները,
- թվարկել տոների խորհրդանիշները:

Դաս 6. Ես և իմ դասընկերները *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ավարտի՛ր միտքը:

   Եթե անկարգություն ես արել, պետք է ----------խնդրես:

   Եթե ընկերդ քեզ օգնում է, պետք է ----------

   հայտնես:

2. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ինչպիսի՞ն պետք է լինի լավ ընկերը.

   - բարի,
   - ստախոս,
   - ազնիվ:

3.Ի՞նչ խորհուրդ կտաս նկարում պատկերված երեխաներին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ընկերության մեջ լավ և վատ արարքները,
- ընկերական փոխհարաբերությունների պահպանման կարևորությունը,
- ինչ է կոնֆլիկտը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարբերակել դրական և բացասական արարքներն արտահայտող խոսքերը,
- նշել լավ ընկերոջը բնորոշող հատկանիշները,
- ներկայացնել կոնֆլիկտային իրավիճակների և վեճերի խաղաղ կարգավորման ուղիներ:

Դաս 7.Վարքագիծը դպրոցում *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Նշի'ր սխալ պատասխանը:
   - Պարտականությունն այն է, ինչ ես կարող եմ անել:
   - Իրավունքն այն է , ինչ ես կարող եմ անել:
2. Առանձնացրո'ւ իրավունքներն ու պարտականությունները՝ լրացնելով համապատասխան շարքերը.

Սովորել դասերը, խաղալ, հարգել միմյանց, հանգստանալ դասամիջոցին:



3. Դուք ճի՞շտ եք վարվում , եթե.....: Ընդգծի'ր այո կամ ոչ պատասխանները:

- Կոնֆետի թուղթը միշտ նետում եք աղբարկղը: (այո, ոչ)
- Համբերատար լսում ես դիմացինիդ, ապա ասում ես քո խոսքը: (այո, ոչ)

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- իրավունք ու պարտականություն հասկացությունները,
- դասարանական կանոնները պահպանման կարևորությունը,
- քաղաքավարության կանոնների պահպանման կարևորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարբերակել և նշել իրավունքներն ու պարտականությունները,
- դասակարգել յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները դպրոցում,դասարանում,
- թվարկել քաղաքավարության կանոնները:

Դաս 8. Իմ փողոցը, իմ բակը, իմ տունը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ավարտի՛ր միտքը:

Իմ երկիրը---------- է: Ես ապրում եմ Հայաստանի---------- քաղաքում (գյուղում):

2. Տրվածներից նշի՛ր այն տարբերակները, որոնք կան ձեր տան շրջակայքում:
   - բարձրահարկ շենքեր,
   - ծառեր,
   - փողոցներ,
   - դպրոց:

3. Նշի՛ր հնարավոր ճիշտ տարբերակները: Ինչպե՞ս են նկարում երեխաները հոգ տանում իրենց բակի մասին.

   - հավաքում են ճյուղերը,
   - կոտրում են ծառի ճյուղերը,
   - ջրում են ծառերը:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- իր հայրենի երկրի անվանումը,
- իր բնակավայրին կից շինությունները ,
- շրջակա միջավայրը բարեկարգելու կարևորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել քաղաքը կամ գյուղը , որտեղ բնակվում է,
- նշել իր բնակավայրին կից կառույցները, տեսարժան վայրերը,
- ներկայացնել պատասխանատու և հոգատար վերաբերմունքի դրսևորումը շրջակա միջավայրի հանդեպ:

Դաս 9. Իմ համայնքը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ի՞նչ պետք է անեն միևնույն համայնքի մարդիկ: Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները.
   - պետք է օգնեն իրար,
   - կեղտոտեն շրջակա միջավայրը,
   - մաքուր և կոկիկ պահեն իրենց տները, բակերը, փողոցները,
   - համագործակցեն իրար հետ:
2. Ինչպե՞ս բարեկարգել համայնքը: Լրացրո՛ւ միտքը համապատասխան բառերով: **հավաքել, մաքուր պահել, տնկել**
   - ---------- աղբը,
   - ----------շրջակա միջավայրը,
   - ծառեր----------:
3. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ի՞նչը կփոխեիր քո համայնքում.
   - բարեկարգել խաղահրապարակը,
   - կտրել ծառերը,
   - ներկել նստարանները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ինչ է համայնքը,
- համայնքում հնարավոր խնդիրների առկայությունը,
- համայնքը բարեկարգելու կարևորությունը և ուղիները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- նշել փոխօգնության, մարդկային բարեհաճ փոխհարաբերությունների դերը համայնքի խնդիրների լուծման ժամանակ,
- ներկայացնել համայնքի բարեկարգման ուղիները,

- նկարագրել իր համայնքը, առաջացած խնդիրները և այդ խնդիրների լուծման ուղիները:

Դաս 10. Իմ քաղաքը, գյուղը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Գրի՛ր նշված նկարներից ո՞րն է քաղաքային, ո՞րը գյուղական բնակավայր:

---

2. Թվարկված բառերն ու բառակապակցությունները տեղադրի՛ր<<քաղաք>>կամ<<գյուղ>> սյունակներում.

բարձրահարկ շենքեր, կով, լայն փողոցներ,արոտավայր:

Քաղաք	Գյուղ

3. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները: Ինչո՞վ են զբաղվում մարդիկ գյուղում.

- հողագործությամբ,
- բարձրահարկ շենքերի կառուցապատմամբ,
- անասնապահությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- գյուղի և քաղաքի տարբերությունը,
- այն ընտանի կենդանիների անվանումները, որոնք սովորաբար պահում են գյուղում,
- որոշ տեղեկություններ իր բնակավայրի մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարբերակել նկարներն՝ ըստ գյուղական և քաղաքային բնակավայրերի,
- խմբավորել քաղաքի և գյուղի տարբերությունները բնորոշող հատկանիշները,
- թվարկել հիմնական զբաղմունքները գյուղում և քաղաքում:

Դաս 11. Ես և իմ բնակավայրը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Դիտի'ր նկարները և գնահատի'ր արարքները : Ընդգծի'ր:

լավ, վատ



լավ, վատ

2. Նշի'ր ճիշտ պատասխանը: Ամառային մի շոգ օր Արամը գնեց պաղպաղակ: Ինչպե՞ս վարվի ձեռքին մնացած պաղպաղակի թղթե փաթեթի հետ.

- թղթե փաթեթը դնի գրպանի մեջ,
- թղթե փաթեթը նետի գետնին,
- թղթե փաթեթը գցի աղբամանի մեջ,

3.Նշվածներից ընդգծի'ր այն պատկերները , որոնց կարող ես հանդիպել քո բնակավայրի շրջակայքում :

- եկեղեցի,
- շատրվան,
- զբոսայգի,
- բարձրահարկ շենք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները,
- շրջակա միջավայրը մաքուր պահելու կարևորությունը,
- իր բնակավայրի տեսարժան վայրերը, կառույցները, կենդանական և բուսական աշխարհը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարբերակել և նշել լավ և վատ արարքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի վրա:
- գնահատել և որոշել տվյալ իրավիճակը ըստ հնարավոր հետևանքների,
- նշել իր բնակավայրի տեսարժան վայրերը, բնությունը, կառույցները:

Դաս 13. Ի՞նչ է մեզ շրջապատում *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Տարբերակե՛ք և լրացրեք աղյուսակը երկու սյունակով.

գիրք, ծով, սեղան, թռչուն

մարդու ստեղծած առարկաներ	բնության ստեղծած առարկաներ

2.Խմբավորի՛ր նկարի միջի պատկերները և գրի՛ր առնվազն երկուական :



կենդանի բնություն	անկենդան բնություն

3. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ի՞նչ է անհրաժեշտ բույսերին, կենդանիներին,մարդուն ապրելու համար.

- կրակ,
- ջերմություն,
- ջուր,
- լույս:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ինչ է մեզ շրջապատում,
- կենդանի և անկենդան բնություն հասկացությունները,
- կենդանի էակներին բնորոշող հիմնական հատկանիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել բնության մեջ առկա և մարդու կողմից ստեղծված առարկաները,
- տարանջատել կենդանի բնության և անկենդան բնության բաղադրիչները,
- ներկայացնել, թե ինչեր են անհրաժեշտ կենդանի օրգանիզմների աճի և զարգազման համար :

Դաս 14. Բնությունն աշնանը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նայելով նկարին՝ գրի՛ր առնվազն երկու աշնանային երևույթ:

---

2. Նշի՛ր աշնան երեք ամիսները.
   - մարտ,
   - սեպտեմբեր,
   - հոկտեմբեր,
   - նոյեմբեր:

3. Առանձնացրո'ւ չվող և ձմեռող թռչունները և լրացրո'ւ աղյուսակը.
ծիծեռնակ, ագռավ, կռունկ, ճնճղուկ

չվող թռչուններ	ձմեռող թռչուններ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- աշնանը տեղի ունեցող երևույթները,
- ամիսների անվանումները,
- թռչունների տեսակները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- բնութագրել աշնանային երևույթները, մարդկանց, կենդանիների կյանքը աշնանը,
- թվարկել աշնան ամիսները,
- տարբերակել ձմեռող և չվող թռչունները:

Դաս 15. Ինչպիսի՞ն են բույսերը *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Դիտի'ր նկարը և գրի'ր բույսի մասերի անունները(արմատ, ցողուն, տերև, ծաղիկ, պտուղ, սերմ):



2.Լրացրո'ւ նախադասությունները՝ օգտվելով ներքևում տրված բառերից:

Ծառերն ունեն ----------բուն, ---------- հասակ:
Թփերն ունեն ծառերի համեմատ ավելի ----------հասակ:
Խոտաբույսի ցողունը ունի---------- գույն:

կանաչ, ցածր, հաստ, բարձր

3.Առանձնացրո'ւ և լրացրու աղյուսակը.

կաղնի,երիցուկ, մասրենի

Ծառ	*Թուփ*	*Խոտաբույս*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- բույսերի մասերը,
- բույսերի տեսակները,
- բույսերի անվանումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- Ճանաչել և թվարկել բույսերի մասերը,
- առանձնացնել բույսերի զանազանությունը բնութագրող հիմնական հատկանիշները,
- խմբավորել ծառերը, թփերը և խոտաբույսերը:

Դաս 16. Ի՞նչ կենդանիներ գիտես *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Սլաքներով միացրո՛ւ նկարներն ու համապատասխան անվանումները:

2. Նշի՛ր ճիշտ պատասխանը :Որտեղի՞ց են կաթնասունները ստացել իրենց անունը.

- ○ իրենց ձագերին կերակրում են միջատներով,
- ○ իրենց ձագերին կերակրում են կաթով,
- ○ իրենց ձագերին կերակրում են մսով:

3.Սլաքով միացրո՛ւ և ստացիր ճիշտ ձևակերպումները:

թռչուն	շարժվում է սողալով
ձուկ	մարմինը ծածկված է փետուրներով
սողուն	մարմինը պատված է թեփուկներով

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- կենդանիների անվանումները ,
- կաթնասուն անվան ծագումնաբանությունը,
- կենդանիների խմբերի անվանումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ճանաչել և տարբերակել կենդանիների խմբերը,
- նշել կաթնասուններին բնորոշող առանձնահատկությունը,
- ներկայացնել կենդանիների խմբերը բնութագրող հիմնական հատկանիշները:

Դաս 17. Անտեսանելի կապերը բնության մեջ *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր ճիշտ պատասխանը:Բուսակեր կենդանիները այն կենդանիներն են, որոնք սնվում են....

- մսով,
- բույսերով,
- միջատներով:

2.Ուշադի՛ր դիտիր նկարը և սլաքով ստացի՛ր այնպիսի սննդային շղթա,որը ցույց տա,թե որ կենդանի օրգանիզմը ինչով է սնվում:

մարդ	նապաստակ
թռչուն	կաթ
գայլ	միջատ

3. Նշի'ր ճիշտ պատասխանները:Քո կարծիքով, եթե երկար ժամանակ անձրև չգա, հողը չորանա, ի՞նչ կպատահի...

- բույսերը կչորանան,
- ոչինչ չի պատահի,
- բուսակեր կենդանիները չեն ապրի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- բուսակեր և գիշատիչ կենդանիների տարբերությունը ,
- սննդային շղթա հասկացությունը,
- ջրի կարևորությունը բնության մեջ :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել բուսակեր կենդանիներ ,
- ներկայացնել անտեսանելի կապերը բնության մեջ,
- ներկայացնել ջրի կենսական նշանակությունը կենդանի օրգանիզմի համար:

Դաս 18. Վայրի բույսեր *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:
   - Վայրի բույսերն այն բույսերն են, որոնք աճում են անտառներում, մարգագետիններում:
   - Վայրի բույսերն այն բույսերն են, որոնք մարդն է աճեցրել:
   - Դեղաբույսերն հավաքելիս չի կարելի արմատով պոկել, որպեսզի հաջորդ տարի էլ նրանք աճեն:
2. Սլաքով միացրո՛ւ և ստացիր ճիշտ պատասխանները:

բամբակ	սեղան
փայտ	գլխարկ
ծղոտ	զգեստ

3. Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտվելով ներքևում տրված բառերից:

Շատ բույսեր օգնում են մարդկանց բուժելու զանազան ----------:

Այդպիսի բույսերը մարդիկ անվանում են ----------:Բուժիչ նյութերը կարող են գտնվել բույսի տարբեր մասերում՝ արմատներում,----------, ծաղիկներում, բողբոջներում, պտուղներում և սերմերում:

(տերևներում, հիվանդություններ, դեղաբույսեր)

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- բույսերի՝ վայրի կոչվելու հիմնական պատճառը,
- բույսերի կենսական նշանակությունը մարդու կյանքում,
- դեղաբույսերի բուժիչ հատկությունների մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել վայրի բույսերը բնորոշող առանձնահատկությունները,
- ներկայացնել բույսերից ստացվող կենսական նշանակություն ունեցող պարագաները,
- թվարկել դեղաբույսերի մասերը, որտեղ գտնվում են բուժիչ նյութերը:

Դաս 19. Մեր այգիներն ու բանջարանոցները *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Գունավորի՛ր միայն խաղողը:



2.Խմբավորի՛ր.

հաց, կաթ, ձու, բուսական յուղ

Բույսերից ստացվող սննդամթերք	Կենդանիներից ստացվող սննդամթերք
1.	
2.	

3.Սլաքով միացրո՛ւ և ստացիր ճիշտ պատասխանները:

ցորեն	մուրաբա
դդում	գինի
կաղամբ	հաց
խաղող	թթու

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- մրգերի և բանջարեղենի անվանումներ,
- բույսերից և կենդանիներից ստացվող սննդամթերքների անվանումները,
- բնության բարիքների կարևորությունը մարդու կյանքում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարբերակել մրգերն ու բանջարեղենը,
- խմբավորել բույսերից և կենդանիներից ստացվող մթերքները,
- թվարկել այն բարիքները, որոնք ստացվում են մրգերից և բանջարեղենից:

Դաս 20. Սենյակային բույսեր *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:
   - Բոլոր սենյակային բույսերի հայրենիքը ցուրտ երկրներն են:
   - Բոլոր սենյակային բույսերի հայրենիքը տաք երկրներն են:
   - Բոլոր սենյակային բույսերը առանձնահատուկ խնամքի կարիք ունեն:

2. Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտվելով ներքևում տրված բառերից:

Սենյակային բույսերի մեծ մասը ----------են, այսինքն՝ նրանց պետք է դնել լույսին մոտ, բայց ոչ անմիջապես արևի տակ: Պետք է ճիշտ ----------,որպեսզի սենյակային բույսերը գեղեցիկ լինեն: Դրանք ունեն ---------- կարիք:

(ջերմության, լուսասեր , խնամել)

3.Ընդգծի՛ր սենյակային բույսերը:

Հալվե, խորդենի, տատրակ, կալանխոե:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- բույսերի՝ սենյակային կոչվելու հիմնական պատճառը,
- սենյակային բույսերի ճիշտ խնամքի կարևորությունը ,
- սենյակային բույսերի անվանումներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել սենյակային բույսերի առանձնահատկությունները ,
- ներկայացնել սենյակային բույսերի խնամքը,
- տարբերակել սենյակային բույսերը:

Դաս 21. Վայրի կենդանիներ *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի'ր ճիշտ պատասխանը: Վայրի կենդանիները.....

- առանց մարդու օգնության չեն կարող ապրել,
- ապրում են բնության մեջ և մարդու խնամքի կարիքը չունեն:

2.Տառերի դասավորությունը փոխելով՝ ստացի'ր վայրի կենդանիների անունները:

ջրա, իղվի, ոյածու, ագյլ

---

2. Սլաքով միացրո'ւ ճիշտ պատասխանները:

արջը	ընկույզ, կաղին է ամբարում
միջատները, սողունները	փոխում է իր գույնը ձմռանը
սկյուռը	մարմնի կայուն ջերմաստիճան չունեն
նապաստակը	ձմռանը քուն է մտնում իր որջում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- վայրի և ընտանի կենդանիների տարբերությունը ,
- վայրի կենդանիների անվանումները,
- տեղեկություններ վայրի կենդանիների մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել վայրի կենդանիներին բնորոշող հատկանիշները,
- թվարկել վայրի կենդանիները,
- ներկայացնել եղանակին համապատասխան կենդանիների վարքագիծը , կյանքը:

Դաս 22. Ընտանի կենդանիներ *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի'ր ճիշտ պատասխանը:
   - Ընտանի կենդանիները կարող են ապրել առանց մարդու օգնության:
   - Ընտանի կենդանիները ունեն մարդկանց խնամքի և օգնության կարիքը:

2.Ինչի՞ց ինչ են ստանում: Սլաքներով միացրո'ւ համապատասխան նկարները:



3.Ի՞նչ ընտանի կենդանի կցանկանայիր պահել և ինչո՞ւ: Գրի'ր 1-2 նախադասությամբ:

4.Տառերի դասավորությունը փոխելով՝ ստացի'ր ընտանի կենդանիների անունները:

ագս, խոաչր, ովկ, ունշ,

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- մարդու դերը ընտանի կենդանիների կյանքում ,
- ընտանի կենդանիներից ստացած բարիքները,
- ընտանի կենդանիների անվանումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել ընտանի կենդանիներին բնորոշող հատկանիշները,
- թվարկել այն բարիքները, որոնք մարդիկ ստանում են ընտանի կենդանիներից,
- թվարկել ընտանի կենդանիները:

Դաս 23. Եղի՛ր բնության բարեկամ *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր մարդու հասցրած վնասները բնությանը.
   - թռչունների բների պատրաստում,
   - կենդանիների որս,
   - ծառերի հատում,
   - ծառատունկ:
2. Նկարի՛ր համապատասխան նշանը:

Օրինակ՝ չենք որսում թիթեռներ

Չի կարելի կտրել ծառերը .....

3. Ինչպե՞ս լինել բնության բարեկամը: Սլաքով միացրո՛ւ ճիշտ պատասխանները:

մաքուր պահել	կենդանիներին
չորսալ	շրջակա միջավայրը
տնկել	ծառերի ճյուղերը
չկոտրել	ծառեր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- մարդկանց և բնության փոխադարձ կապի մասին,
- բնապահպանական կանոնների և նշանների պահպանման կարևորությունը,
- բնության պահպանության ուղղված աշխատանքների կարևորությունը :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- բացատրել մարդու գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,
- ներկայացնել բնապահպանական կանոնները և նշանները,
- ներկայացնել բնության պահպանության ուղիները:

Դաս 24. Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ:Կարմիր գիրք

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր ճիշտ պատասխանը: Գիրքը կոչվում է Կարմիր, որովհետև.....

   - կարմիր գույնը մարդկանց զգուշացնում է, որ կենդանիներն ու բույսերը վտանգի մեջ են, պետք է օգնել նրանց,
   - կարմիր գույնը ուրախության նշան է:

2.Խմբավորի՛ր այն կենդանիները և բույսերը, որոնք ընդգրկված են Կարմիր

գրքի մեջ: Լրացրո՛ւ աղյուսակը:

բեզոարյան այծ,մոխրագույն կռունկ,վայրի հիրիկ, սպիտակ ջրաշուշան:

Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ	Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ

3. Ինչպե՞ս ես վերաբերվում կենդանիներին և բույսերին: Նշի՛ր ճիշտ պատասխանը:
   - Պետք է անխնա որսալ կենդանիներին ու հատել ծառերը:
   - Պետք է պահպանել բուսական և կենդանական աշխարհը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- գրքի՝ կարմիր կոչվելու ծագումնաբանությունը,
- Կարմիր գրքի ստեղծման անհրաժեշտության մասին,
- մարդու դերը բնության հետ կատարվող փոփոխություններում:

- **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**
    - բացատրել վտանգված բնություն հասկացությունը,
    - ճանաչել բույսերի և կենդանիների վտանգված տեսակները,
    - ներկայացնել մարդու դերը կենդանիների և բույսերի պահպանության հարցում:

Դաս 26.Եթե ուզում ես առողջ լինել *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Ավարտի՛ր միտքը:

Ուտելուց առաջ անհրաժեշտ է անպայման ձեռքերը----------:

Երբեք մի՛ կեր չլվացած ----------:

2. Նշի՛ր հնարավոր ճիշտ տարբերակները: Ի՞նչ պետք է անել առողջ լինելու համար.

- մարմնամարզություն անել,
- ատամները մաքրել,
- եղունգները կրծել,
- նախաճաշել:

3.Թվարկի՛ր քեզ ծանոթ առնվազն երկու անձնական հիգիենայի կանոն:

---

4. Ընդգծի՛ր այն առարկաները, որոնք միայն դու ես օգտագործում.

սրբիչ, ատամի խոզանակ, օճառ, սանր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ուտելուց առաջ հիգիենայի կանոնների պահպանումը,
- առողջ լինելու կանոնների պահպանման կարևորությունը,
- անձնական հիգիենայի կանոնների պահպանման կարևորությունը,
- անձնական հիգիենայի պարագաները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- նկարագրել ուտելուց առաջ հիգիենայի կանոնների պահպանումը,
- թվարկել առողջության պահպանման կանոնները,
- ներկայացնել անձնական հիգիենայի պահպանման կանոնները,
- տարբերակել անձնական և ընդհանուր օգտագործման հիգիենայի պարագաները:

Դաս 27.Ինչո՞վ ենք սնվում *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխաններ:

   - Մարդիկ սնվում են,որ ապրեն:
   - Մարդիկ սնվում են,որ հիվանդանան:
   - Մարդիկ սնվում են,որ առողջ լինեն:

2. Ընդգծի՛ր այն մթերքները, որոնք ստանում են կենդանիներից.

   կաթ, դեղձ, մեղր, ձու, կարտոֆիլ:

3. Ուտելուց առաջ անհրաժեշտ է անպայման միրգը և բանջարեղենը .....:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- սնվելու կարևորությունը,
- կենդանիներից ստացվող մթերքները,
- ուտելուց առաջ մրգերն ու բանջարեղենը լավ լվանալու անհրաժեշտության մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ընտրել առողջ սնունդ,
- տարանջատել այն մթերքները, որոնք ստացվում են կենդանիներից,
- ներկայացնել առօրյա կյանքում ուտելուց առաջ մրգերն ու բանջարեղենը ճիշտ օգտագործելու կարևորագույն կանոնը:

Դաս 28 .Ինչպե՞ս խուսափել հիվանդանալուց *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ինչպե՞ս խուսափել հիվանդանալուց.

- զբաղվել մարմնամարզությամբ,
- շփվել հիվանդ մարդկանց հետ,
- հագնվել եղանակին համապատասխան:

2. Ի՞նչ պետք է անել, եթե տանը հիվանդ կա: Սլաքներով միացրո՛ւ և ստացի՛ր ճիշտ պատասխանը:

հաճախակի օդափոխել	քթակապ կամ դիմակ
առանձնացնել	սենյակը
կրել	հիվանդի սպասքը

1. Նշի՛ր սխալ տարբերակը:Ի՞նչը կարող է փորացավ առաջացնել.
   - անորակ, փչացած սնունդը,
   - առողջ, օգտակար սնունդը,
   - փորկապությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- առողջ լինելու կարևորությունը,
- ինչ անել, երբ տանը հիվանդ կա,
- ինչից կարող է ցավել որովայնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- ներկայացնել հիվանդանալուց խուսափելու ճիշտ տարբերակները,
- թվարկել վարվեցողության կանոնները, երբ տանը հիվանդ կա,
- ներկայացնել անորակ սննդի օգտագործման բացասական հետևանքները:

Դաս 29.Տանը նույնպես պետք է ուշադիր լինել *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր առնվազն երկու վտանգ, որոնք կարող են պատահել տանը:

---

2. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ի՞նչ պետք է անել, երբ բնակարանում գազի հոտ է զգացվում.

- վառել լուցկի կամ միացնել որևէ էլեկտրական սարքավորում,
- անհապաղ բացել դուռն ու պատուհանները,
- զանգահարել գազի վթարային ծառայություն:

3.Սլաքով միացրո՛ւ ճիշտ պատասխանները:

1-02	գազի վթարային ծառայություն
1-03	ոստիկանություն
1-04	շտապ օգնություն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- հնարավոր վտանգները, որոնք կարող են պատահել տանը,
- գազի արտահոսքի դեպքում անվտանգության կանոնների պահպանման կարևորությունը,
- հեռախոսահամարները, որոնցից պետք է օգտվել վտանգների դեպքում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.,

- թվարկել, թե ինչերը կարող են վտանգավոր լինել տանը,
- կիրառել այն կանոնները, երբ բնակարանում զգացվում է գազի սուր հոտ,
- օգտվել վտանգի դեպքում համապատասխան հեռախոսահամարներից:

Դաս 30.Ես հետիոտն եմ *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Ի՞նչ խորհուրդ կտաս նկարում փողոցը հատող անցորդին: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- Փողոցն անցնել սպիտակ ներկով նշագծված հատվածով:
- Փողոցը չանցնել սպիտակ ներկով նշագծված հատվածով:

2. Սլաքով միացրո՛ւ ճիշտ պատասխանները:

կարմիր լույս	շտապ վազի՛ր ու անցի՛ր
դեղին լույս	կանգնի՛ր
կանաչ լույս	սպասի՛ր

3. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:
   - Զգույշ անցնել փողոցը:
   - Փողոցը անցնելիս հեռախոսով խոսել:
   - Քայլել մայթով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- հետիոտնի համար սահմանված կանոնները,
- ճանապարհային երթևեկության կանոները,
- փողոցն անվտանգ հատելու կարևորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- տարանջատել փողոցը հատելու ճիշտ և սխալ տարբերակները,
- ներկայացնել լուսացույցից օգտվելու կանոնները:

Դաս 31.Էքսկուրսիա դեպի բնություն *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1.Ի՞նչ է անհրաժեշտ վերցնել էքսկուրսիա գնալիս: Գրի՛ր առնվազն երկու առարկա:

---

2. Նշի՛ր հնարավոր ճիշտ տարբերակները:Ինչո՞ւ է անհրաժեշտ գնալ էքսկուրսիա.
   - մաքուր օդում գտնվելու համար,
   - ծառերի ճյուղերը կոտրելու և թռչուններին վնասելու համար,
   - բույսերը, կենդանիները, գեղեցիկ վայրերի ուսումնասիրելու համար,
   - ընկերների հետ լավ ժամանց անցկացնելու համար:

3. Նկարի՛ր որևէ բույս կամ կենդանի, որ քեզ ամենից շատն է դուր եկել էքսկուրսիայի ժամանակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- էքսկուրսիա գնալու համար որոշ պարագաների կարևորությունը,
- Էքսկուրսիաների կազմակերպման անհրաժեշտությունը,
- տարբեր բույսեր և կենդանիներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- առանձնացնել էքսկուրսիա գնալու համար անհրաժեշտ պարագաները ,
- հիմնավորել էքսկուրսիա գնալու անհրաժեշտությունը,
- նկարել թեմային համապատասխան նկար :

Դաս 32.Առջևում ամառ է *Թեմատիկ պլան*

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումն ստուգելու համար:

1. Նշի՛ր հնարավոր ճիշտ պատասխանները:Ի՞նչ է անհրաժեշտ անել ամռանը.
   - զբաղվել սպորտով,
   - շատ ուտել մրգեր,
   - շատ լինել բնության գրկում,
   - կոտրել ծառերի ճյուղերը:
2. Ո՞վ է լավ հանգստացողը: Ընդգծի՛ր առնվազն երկու ճիշտ տարբերակ:

3. Ինչո՞վ ես սիրում զբաղվել ամռանը: Գրի՛ր 1-2 նախադասությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- ամռան ընթացքում անհրաժեշտ զբաղմունքները,
- լավ հանգստացող հասկացությունը,
- լավ հանգիստ կազմակերպելու կարևորությունը :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- թվարկել, թե ինչով է պետք զբաղվել ամռանը,
- տարբերակել լավ և սխալ հանգստի ձևերը,
- ներկայացնել ամռանը իր հանգստի անցկացման ձևերը :